

Յաւիտենական հանգիստ Վիոլէթ Մելիտոնեանի

Ապրիլ 7 2008-ին, վաղ առաւօտեան, Մոնթրէալի St. Mary's հիւանդանոցին մէջ իր մահկանացուն կնքեց համայնքիս նուիրեալ ծառայող՝ օրհորդ Վիոլէթ Մելիտոնեանը, յետ երկարատեւ հիւանդութեան:

Ծնած էր Աղեքսանդրիա, Եգիպտոս, բնիկ Ջէթունցի ծնողներէ: Մայրը՝ Չարոնի, բարեսիրտ եւ աստուածավախ հայուհի մը, կը մահանար անժամանակ կերպով երբ Վիոլէթ 17 տարեկան էր: Հայրը՝ Սարգիս, Ջէթունի հերոսներէն, իր երիտասարդութեան չորս եղբայրներուն հետ բազմաթիւ հերոսամարտերով պաշտպանած էր արծուարոյն Ջէթունի հայ բնակչութիւնը, վանելով նոյնիսկ թրքական կանոնաւոր բանակին յարձակումները: Վերապրելով Մեծ Եղեռնը, ան Առաջին Աշխարհամարտի վերջաւորութեան, Կիլիկիոյ շրջանին մէջ տուն վերադարձող վերապրած հայերուն եւս պաշտպան կեցած էր քաջարի իր մարտական ընկերներուն հետ, երբ ֆրանսական ուժերը կը քաշուէին, հայերը կրկին անգամ լքելով բուրբ ջարդարարներու գոտին: Միշտ մահը արհամարհող հերոս Սարգիս Աղեքսանդրիա հաստատուելով, իր կողակիցին մահէն ետք կը նուիրուէր իր միակ զուակին՝ Վիոլէթի բարօրութեան, մինչեւ խոր ծերութիւն, ու կը մահանար 94 տարեկանին:

Վիոլէթ Մոնթրէալ կը փոխադրուի 60-ական բուականներուն: Որպէս ճարտար կարուհի, կ'աշխատի յարատեւօրէն, առանձին դիմագրուելով կեանքի բոլոր դժուարութիւնները, առանց ռեւէ մէկուն բեռ ըլլալու կամ ծանձրոյթ պատճառելու: Ան ոչ միայն կ'ապահովէ



իր կեանքը, այլ գործօն կերպով իր մասնակցութիւնը կը բերէ այս գաղութին եկեղեցական, մշակութային եւ ազգային կեանքին, յատկապէս Թէքեան Մշակութային Միութեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ «Ապագայ» շաբաթաթերթի ծիրէն ներս, օգնելով ձեռնարկներու կազմակերպութեան, տոմսերու վաճառման եւ հանգանակութիւններու յաջողութեան: Չունէր ընտանեկան կամ մօտ ազգանական կապեր, սակայն ամբողջ համայնքը իր ընտրանիքն էր եւ մեր եկեղեցին ու ազգային հաստատութիւնները իր տուններն էին: Նոյնիսկ իր յառաջացեալ տարիքին ու տկար վիճակին, ան չէր բացակայէր եկեղեցիէն, ոչ ալ գրեթէ բոլոր ձեռնարկներէ, որովհետեւ անոնք իր կեանքը իմաստաւորող եւ լիցքաւորող միակ միջոցներն էին: Կուրա-

խանար, կը խանդավառուէր ու հոգեպէս կը վերանորոգուէր ամէն մէկ յայտագրի աւարտին կամ եկեղեցական տօնակատարութիւնէ ու սիրոյ սեղաններէ ետք: Թէեւ այլեւս կարող չէր օգնելու կազմակերպողներուն, սակայն միշտ կ'օրհներ բոլոր աշխատողները եւ իր լուսնան չէր խնայէր քաջալերելու համար գանոնք: Իր ծնողաց անունով հաստատած էր անձեռնմխելի ֆոնտ մը, «Ապագայ» շաբաթաթերթին որպէս «հունտ», սկիզբը դնելով թերթին յետագայ նիւթական ապահովութեան ընթացքին: Վերջին տարիներուն գոհունակութեամբ կը յայտնէր, թէ իր տարիներու համեստ խնայողութիւնը ամբողջութեամբ կտակած էր մեր ազգային եւ եկեղեցական հաստատութիւններուն, յուսալով օրինակ հանդիսանալ ուրիշներու:

Ողբացեալ Վիոլէթ Մելիտոնեանի յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ մայր տաճարին մէջ, նախագահութեամբ թեմիս առաջնորդ Գերշ. Տ. Բագրատ եպս. Գալստանեանի եւ մասնակցութեամբ զոյգ քահանայ հայրերու ու դպրաց դասին, եւ ներկայութեամբ բարեկաններու, գործակիցներու եւ ՀԲԸՄ-ի Ռսկեայ Տարիքի իր ընկերուիներու հոծ բազմութեան:

Ոգեկոչելու համար Վիոլէթի յիշատակը, ԹՄՄ-ի վարչութիւնը որոշած է հոգեճաշ մը սարքել Կիրակի 4 Մայիսին, Միութեան կեդրոնին մէջ, իսկ ողբացեալին քառասունքի արարողութիւնը պիտի կատարուի Կիրակի, 18 Մայիսին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցոյ մէջ: